

ԱՆՆԻ ԵՎ ԺԱՆ-ՊԻԵՌ ՄԱՀԵՆԵՐԻ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ»
ԵՐԿԻ ՖՐԱՆՍԵՐԵՆ ԱՌԱՋԱԲԱՆԸ ՈՐՊԵՍ ՆԱՐԵԿԱՑԻԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆՈՐ ԽՈՍՔ

Դոկտիսանյան Ա. Գ.

2012-ին «Նաիրի» հրատարակչությունը լույս աշխարհի բերեց Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» ֆրանսերեն նոր թարգմանությունը Աննի և Ժան-Պիեռ Մահեների թարգմանությամբ, առաջաբանով ու ծանոթագրություններով [2]:

Մահեները երկար տարիներ զբաղվել են Գրիգոր Նարեկացու ողջ ստեղծագործությամբ: Նրանց նարեկագիտական հետազոտական աշխատանքի ամփոփումը դարձավ 2002-ին Փարիզում լույս տեսած «Գրիգոր Նարեկացին և նրա «Մատեան ողբերգութեան» երկը» ծավալուն աշխատությունը, որը 2004-ին թարգմանվեց հայերեն [8]:

Առաջաբանն ավարտվում է դիպուկ մի եզրահանգումով, ըստ որի՝ Գրիգոր Նարեկացին հավատացած է՝ իրենից հետո իր գիրքը հնչելու է անհամար բազմության շուրթերին՝ մինչև վերջին դատաստանը Աստծուն աղոթելով իր անունից: Ինչ վերաբերում է նրա հայրենակիցներին, ապա նրա ուխտը լիովին լսելի է: Հայերը չեն դարձել նրա գրաքննադատը, այլ նրանով ունեն կապ, որը հրահանգում է կորովամտություն, պայծառատեսություն, նա հոգևոր մի ուսուցիչ է, որը զորացնում է հայերին և նրանց առաջնորդում հասկանալու Ավետարանի ճշմարիտ շնորհը: «Նարեկը» իսկական գագաթ է, մի բանալի՝ թափանցելու հայերի ամենախնտիմ և ամենաեզակի հոգևորի մեջ:

Բանալի բառեր. Գրիգոր Նարեկացի, «Մատեան ողբերգութեան», Աննի և Ժան-Պիեռ Մահե, առաջաբան, վերժամանակյա, Աստվածաշունչ, Ավետարան, Քրիստոս, մեղք, դատաստան:

2012-ին «Նաիրի» հրատարակչությունը լույս աշխարհ բերեց Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» ֆրանսերեն նոր թարգմանությունը Աննի և Ժան-Պիեռ Մահենների թարգմանությամբ, առաջաբանով ու ծանոթագրություններով [2]:

Մահենները երկար տարիներ զբաղվել են Գրիգոր Նարեկացու ողջ ստեղծագործությամբ: Նրանց նարեկագիտական հետազոտական աշխատանքի ամփոփումը դարձավ 2002-ին Փարիզում լույս տեսած «Գրիգոր Նարեկացին և նրա «Մատեան ողբերգութեան» երկը» ծավալուն աշխատությունը, որը 2004-ին թարգմանվեց հայերեն [8]:

2012-ին Երևանում լույս տեսած «Մատեան ողբերգութեան» երկը ներածությունից բացի ունի խիստ համառոտ նախաբան, որը փաստահարուստ է: Երևանյան հրատարակչության հիմքում ընկած է Լուվենում Մահենների թարգմանած «Մատեան ողբերգութեան» երկի ֆրանսերեն բնագիրը, որը լույս է տեսել գրպանի գիրք փոքր ծավալով (en format de poche). դրա ծանոթագրությունները ներկա հրատարակչության մեջ համառոտվել են, բանասիրական և նեղ մասնագիտական դիտարկումները՝ հանվել: Ամբողջովին պահպանվել է Գր. Նարեկացու երկի բնագիրը, որը թարգմանված է ըստ 1985-ին Երևանում լույս տեսած «Մատեանի» քննական բնագրի, որը կազմել էին Պողոս Խաչատրյանն ու Արշալույս Ղազինյանը [1]: Մատյանի 34, 75, 92 և 95 գլուխները բաժանվել են ըստ Գարեգին Տրապիզոնեցու՝ Բուենոս Այրեսում 1948-ին լույս տեսած հրատարակչության:

Հատուկ ուշադրություն է դարձվել պոեմի կառուցվածքին, պահպանվել է Գրիգոր Նարեկացու երկի գլուխների համառոտ վերնագիրը՝ «Ի խորոց սրտից խաւսք ընդ Աստուծոյ»:

Գրիգոր Նարեկացու «Մատեանի» մասին շատերն են գրել: Այժմ առկա է հանճարեղ բանաստեղծի ստեղծագործության գիտական մատենագիտությունը [3]: Մակայն այն, ինչ գրում են Մահենները թե՛ այս առաջաբանում և թե՛ իրենց հատուկ հետազոտության մեջ, լիովին տարբեր մոտեցումներ ու գնահատականներ է ներկայացնում: Ըստ նրանց՝ սա մի նյարդայնացնող, միաժամանակ մարդուն արթուն պահող գիրք է՝ գրված 1002 թվականին մենակյաց վանականի ձեռքով, որը խոստովանում է ողջ մարդկության սարսափելի մեղքերը: Խոստովանելով այդքան առատ ու անհավանական մեղքերը՝ նա իր գրքով հիշեցնում է Հիերոնիմոս Բոսիի պատկերած մղձավանջները:

Քրիստոնեական աշխարհը երկրորդ հազարամյակի վերջում սպասում էր Աստծու դատաստանին: Սա ձայնն է մարդկության

մեծագույն մխիթարիչների, ինչպիսիք էին Բուդդան և Ֆրանսուա Ասիզը, և Նարեկացու գիրքը առ այսօր եզակի տեղ ունի հայ գրականության մեջ: Ոչ մի պոեմ հայ գրականության մեջ մտքի այդ թափը չունի, և քնարականությունը երբեք դեռ չի գտել այդպիսի անհատական դրսևորում:

Հայ մատենագրությունը միաբան ճանաչում է այս պոեմի եզակիությունը: Գրիգոր Նարեկացին ապրել և ստեղծագործել է Նարեկա վանքում, և հայերը նաև «Մատենանը» կոչել են «Նարեկ», որն անմիջապես կապվում է հեղինակի անվան հետ.

Մոյն գիր իմովս ձայնիւ, իբր զիս, ընդ իմ աղաղակեցէ
Տարածեցէ զձածկեալսն, հոչակեցէ զգաղտնիսն,
Կականեցէ զկատարածն, հնչեցէ զմոռացեալսն,
Յայտնեցէ զաներեւոյթսն, բարբառեցէ զբարուրսն... [10-88-3]

Հազար տարուց ավելի է, ինչ Գրիգոր Նարեկացու գիրքն ուղեկցում է հայերին՝ նրանց կյանքի ամենատարբեր հանգամանքներում: Այն հավասարեցված է Ավետարանին, այն կարդում են հիվանդների համար, վերցնում հեռավոր ճանապարհորդությունների ժամանակ, գրքի որոշ հատվածներ դարձել են հմայիլների խոսքեր: Ժան-Պիեռ Մահեն անշուշտ ծանոթ է իր ուսուցչի՝ Ֆրեդերիկ Ֆեյդիի «Հայաստանի քրիստոնեական հմայիլները» աշխատությանը, որում բազում փաստեր կան, որոնք վկայում են Նարեկացու «Մատենանի» հատվածների՝ հմայիլների վերածվելը: [4-65]

Ըստ Մահենների՝ Աստվածաշնչից բացի հայերի մոտ ոչ մի գիրք նման տարածում չի ունեցել: Այս պոեմի եզակիությունը նրան արտոնություն է տվել դառնալ վերժամանակյա [2-5]: Ամեն ժամանակահատվածում այն կարող է ունենալ իր դարի մարդու բացատրությունը: Դիմելով աշխարհի անթիվ քրիստոնյաներին՝ նա խոստովանում է մարդու բոլոր մեղքերը՝ Ադամից մինչև նրա վերջին ժառանգները, որովհետև բոլոր մարդիկ՝ մեռած կամ կենդանի, Աստծու հայացքի տակ են: Միաժամանակ, երբ Գրիգորը իր վերժամանակյա խոստովանություններն էր անում, նա իր գրքի վերջում՝ հիշատակարանում, դնում է «Մատյանը» գրելու ճշգրիտ թվականը, հանգամանքները և խոսում քաղաքական վիճակի մասին: Բյուզանդիայում կայսր էր մեծ Վասիլը, Հայաստանը խաղաղության մեջ էր, սակայն հայոց եկեղեցուն անհանգստացնում էին աղանդավորները.

ահա այս ժամանակ «Նարեկայ մեծափառ եւ բարձրապատիւ ուխտի վանականն իր եղբոր՝ Հովհաննեսի գործակցությամբ ավարտել է «Մատյանը»:

Առաջաբանում առանձին անդրադարձ կա Նարեկյան դպրոցի՝ Գրիգոր Նարեկացու կյանքում ունեցած դերին: 2005-ին Փարիզում լույս տեսած «Հայաստանը դարերի ապացույց» գրքում Մահեները խոսել են Մեծ Հայքի Բագրատունիների և Վասպուրականի Արծրունի թագավորների ու վերջինների կառուցած Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու մասին: [9-64-65] Այս հատվածում հաղորդվում է, որ Գրիգոր Նարեկացին ծնվել է 940-ին, հայրը Խոսրով Անձևացին էր, ուներ երկու եղբայրներ. ավագը՝ Սահակը, միջնեկը՝ Հովհաննեսը: Նա իր մորը կորցրել է շատ վաղ: Այդ մասին նա խոստովանում է «Մատեանի» 51-րդ դրվագում.

Առ մա՛յրն իմ, որ երկնեաց,
Եթե կասեցան գթութիւնքն ընդ նահանջել
կենդանութեանն: [10-308]

Նրա հայրը՝ Խոսրով Անձևացին, կնոջ մահից հետո դառնում է եպիսկոպոս՝ լինելով ժառանգական իշխան: Նարեկացիագետ Հրաչյա Թամրազյանը Գրիգոր Նարեկացու ծնունդը դնում է 947-949 թվականների միջակայքում՝ հետևելով Ս. Աբեղյանին և Պ. Խաչատրյանին [5-10]:

Թոնդրակյան աղանդը ևս քննության է ենթարկվում այս առաջաբանում: Հովհաննես Դ. Օվայեցու ժամանակ (833-855) Ծաղկոտն գավառի Զարեհավան գյուղից Սմբատը դառնում է հիմնադիրը թոնդրակյան շարժման: Սմբատ Զարեհավանցին Հիսուսին մարդայնացնում է, մերժում է եկեղեցու սրբությունները, եկեղեցու կողմից օրհնված ամուսնությունը, հրաժարվում է կիրակին ճանաչել որպես հատուկ օր, չի ընդունում խաչի առաջ խոնարհումը: Թոնդրակեցիները բոլորովին նպատակ չունեին վերափոխել եկեղեցու կառավարումը, նրանք կամենում էին եկեղեցին լրիվ արմատախիլ անել:

Գրիգոր Նարեկացին ունեցել է երկու ուսուցիչներ՝ Խոսրով Անձևացին՝ իր հայրը, և Անանիան՝ Նարեկա վանքի վանահայրն ու Նարեկա դպրոցի գլխավորը: Ե՛վ հայրը, և՛ Անանիա Նարեկացին ունեին աստվածաբանական, փիլիսոփայական գործեր: Անանիա Նարեկացու իրատներն իսկական հոգևոր վարժանքներ են, որոնք պահանջում են

եռանդուն մրցակցություն առ Հիսուսն ունեցած շարունակական խոկման ժամանակ: Նարեկա վանքի վարդապետները զուգահեռաբար իրենց աստվածաբանական հետազոտություններով նպաստում էին աղանդավորների դեմ պայքարելուն: Անանիա Նարեկացին «Հակաճառութիւն ընդդէմ թոնդրակեցոց» երկով [6-41] թվում է, թե վերջ էր դրել այդ աղանդի մերկացմանը, սակայն Կճավա վանքի Մուշեղ անունով ոմն գիտնական շարունակում էր պաշտպանել թոնդրակեցիներին [2-10]:

Տեղին է այս հարցի առիթով հիշել նարեկացիագետ Պողոս Խաչատրյանի հետևյալ նկատումը. «Նարեկացին աններելի է համարում կճավացիների ներողամիտ, հանդուրժողական և, նույնիսկ, համակրական վերաբերմունքը թոնդրակեցիների նկատմամբ, քանի որ աղանդավորների մասին հայտարարել են, թե «չեն նոքա աստար յառաքելաւանդ դաւանութենէ», նույնիսկ ցանկացել են վիճակակից դառնալ նրանց («մեծաւ փափագանաւք հաւասարիլ մասին նոցա») և իրենց արյունը խառնել այն կոտորվածների արյանը, որոնք խողխողվել են Ապլվարդ ամիրայի սրից» [7-99-100]:

Առաջաբանում Մահեները խոսում են 977-ին Նարեկացու գրած «Երգ երգոցի» մեկնության մասին, որի պատվիրատուն Արծրունյաց թագավոր Գուրգեն Արծրունին էր: Այդ մեկնության մեջ հարսը՝ եկեղեցին, կատարելագործվում է փեսայի՝ Հիսուսի խոսքով: Իր ուսուցչի՝ Անանիայի պատվերով է Նարեկացին գրել տաղերը, գանձերը, մեղեդիները, որոնք երգվել են եկեղեցական արարողությունների ժամանակ: Նարեկացին գրել է նաև ներբողյաններ, որոնցից նշանավորը «Պատմութիւն Ապարանից խաչին» գործն է [11-913], իսկ «Հազար թվականի շեմին պատմական բազում հանգամանքները նրան շտապեցնում շարադրել իր ամենանշանավոր երկը՝ «Մատեան ողբերգութեանը», որում հավաքում է իր ողջ կյանքի խոհերն ու մտածումները» [2-11]:

Մահեները համառոտ ներկայացնում են, որ Նարեկացու կյանքը հենց «Մատեանի» մեջ առկա է: Բյուզանդական կայսրության ծայրամասերում հայերն ու հույները շարունակում էին խորանալ աստվածաբանական վեճերի մեջ: Թոնդրակյան աղանդավորական շարժումն անհանգստացնում էր ոչ միայն Հայոց եկեղեցուն, այլև Բյուզանդական կայսրությանը: 1000 թվականին Բյուզանդիայի կայսր Վասիլ Երկրորդը (957-1025, Մակեդոնյան հայկական հարստությունից) ձմեռն անցկացնում է Տարսոնում, երբ լսում է ժամանակին իր դեմ

ապստամբած Դավիթ Կյուրապաղատի հանկարծակի մահվան մասին: Կայսրն անմիջապես իր մեծ բանակով անցնում է Մելիտինեն, վերցնում Հարք գավառը, հասնում մինչև Տայք և վերադառնում Կոստանդնուպոլիս: Իր արշավանքի ընթացքում Հարքում կամ Մանազկերտում հանդիպում է թոնդրակեցիներին, որոնք եկեղեցու թշնամիներն էին [2-12]:

«Մատեան ողբերգութեան» պոեմի երկու գլուխներում՝ 34 և 75, փառաբանվում են եկեղեցին և քրիստոնեությունը, ու մատնացույց արվում աղանդավորների սխալները: Մահեները շեշտում են, որ առաջին անգամ Նարեկացին ընթերցող հասարակությանն է ներկայացնում իր գործերը ոչ թե արքայի պատվերին կամ որևէ եպիսկոպոսին ի պատասխան, այլ սեփական նախաձեռնությամբ: Մատյանի որոշ հատվածներ ներկայացնում են բանաստեղծի ամենօրյա մտածումները, սակայն, անկասկած, կան մտքեր, որոնք նա չի պահպանել իր գրքում: Աստծու և մարդու երկխոսությունն առկա է նաև սուրբգրության մեջ:

Նկատենք, որ գրադաշտական կրոնի սրբազան մատյանի՝ Ավեստայի բազմաթիվ էջերում Զրադաշտը հարց է տալիս Ահուրա Մազդային, և վերջինս պատասխանում է: Նույնը տեսնում ենք նաև XI դարի բյուզանդական նշանավոր միստիկ Միմեոն Աստվածաբանի հիմներում:

Գրիգորն իր խոսքում ընտրում է մարգարեների սաղմոսների ապաշխարական ձևը: Երբեմն Աստծուն ուղղած նրա խոսքերը ստանում են անձնական խոստովանության ձևեր:

«Բանաստեղծը և Աստվածաշունչ» բաժնում մատնացույց են արվում քրիստոնյաների սուրբ գրքերի հետ ունեցած մատյանի աղերսները: Նարեկացին յուրացրել է Հին կտակարանում Սողոմոն հիմաստունին վերագրված գրքերը. [2-15]

Այս Սողոմոնի յուսոյ աղերսանք իմոյս առեալ տիպ,

Քանզի ոչ այլ ոք բազմամեղ, որքան գնա ինձ գուգաշաւիղ: [10-283]

Մատյանի 61-62 գլուխներն ուղղակի գալիս են աստվածաշնչային սաղմոսներից: Նարեկացու մոտ ուժեղ է այլաբանությունը: Գրիգորի մտածումները ներթափանցում են մարդու ներքին աշխարհը: Մեծագույն տարածություն է առաջանում մարդու և այլոց միջև: Ճշմարտությունը մարդուն մատնացույց է անում, թե ինչպես բարձրանալ այդ անդունդից:

Հետաքրքիր է նաև առաջաբանի «Աստվածաշնչային պատկերներ և չգիտակցված նախատիպեր» բաժինը: Բանաստեղծը գրում է.

Ձի՞նչ արինակ առ այս Քեզ նմանագոյն ևս յարմարական
Աստանար եղից, ա՛նձն իմ պարտաւոր:
Պատժակիցս կործանեցելոյն Սողոմայ,
Ըմբերանեալ դատախազս Նինուէի,
Անարի բարբարոս, քան զտիկինն հարաւային,
Վատթարագոյնս, քան զՔանան,
Յամառեցեալս, քան զԱմաղէկ: [10-11]

Այս ինքնաձաղկման օրինակները հոգատար ձևով մեծանում են: Եվ նա խնդրում է Հիսուսին.

Եթէ անարեւնութեան մրրիկ խորտակիչ հողմոյ
յանկարծ բախեցէ.
Չհաստուածս մարմնոյ շինուածոյ մարդոյ յերկրային ծովուս,
Հանդարտեցի՛ անդրէն՝ դէկաւ այս թելոց ի
Քեզ պատկանեալ: [10-26]

Մարդկային մարմինը մի նավակ է, որը տարուբերվում է կենաց ծովում, իսկ Հիսուսը նավավարն է: Այս միտքն առկա է նաև Մեսրոպ Մաշտոցի ապաշխարության շարականներում: Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 7703 ձեռագրում միջնադարյան խորհրդանիշները բացատրող անանուն հեղինակն ունի նաև հետևյալ բացատրությունը. «Արեգակն՝ զՔրիստոս, ծով՝ զաշխարհս, նաւ՝ զմարդկայնինս խորհուրդ, նաւուղղակ՝ զմիտս, նաւահանգիստ՝ զեկեղեցիս Աստուծոյ» [12-108ա]:

Նարեկացին արդիականացնում է աստվածաշնչային պատվիրանները:

Մահէները լիովին նորարար են, երբ խոսում են «Մատենի» աղոթքների ճարտարապետական ձևի մասին: Նրանք «Մատենանը» դիտում են որպէս սիմֆոնիա, որում երաժշտությունը ուժգին բարձրանում է, իսկ երբեմն՝ շատ ցածրանում:

Մահէների կարծիքով Գրիգոր Նարեկացին իր գրքով կառուցել է քրիստոնեական տաճար՝ սքանչելի կառույց: Ոճական մի դրվագ կարող է դառնալ ուղեցույց: Նարեկացու տաճարն ունի նույն պարզությունը,

ինչպիսին որ է հայկական եկեղեցին՝ մի ձև, որը հաստատում է VIII դարի նկարագիրը: Եկեղեցին այլաբանորեն համեմատվում է Նոյի տապանի հետ: [2-26] Այն նույնն է, ինչպիսին եղել է տապանը՝ բաղկացած երեք խորշերից: Եկեղեցին էլ բաղկացած է երեք մասերից՝ գավիթ, տաճար և խորան: Ովքեր մտան Նոյի տապանը, փրկվեցին, նույն կերպ, ովքեր եկեղեցու ճշմարիտ հավատացյալներն են, կփրկվեն խեղդվելուց և սուզվելուց:

Մահեների առաջաբանն ավարտվում է մի անմոռաց եզրահանգմամբ, և վերջին բաժնի խորագիրն է՝ «Գրիգորը և իր գիրքը. մի անմահ ուսուցիչ և մի ննջեցյալ հավերժ կենդանի»:

Առաջաբանն ավարտվում է դիպուկ մի եզրահանգումով, ըստ որի՝ Գրիգոր Նարեկացին հավատացած է՝ իրենից հետո իր գիրքը հնչելու է անհամար բազմության շուրթերին՝ մինչև վերջին դատաստանը Աստծուն աղոթելով իր անունից: Ինչ վերաբերում է նրա հայրենակիցներին, ապա նրա ուխտը լիովին լսելի է: Հայերը չեն դարձել նրա գրաքննադատը, այլ նրանով ունեն կապ, որը հրահանգում է կորովամտություն, պայծառաստեություն, նա հոգևոր մի ուսուցիչ է, որը զորացնում է հայերին և նրանց առաջնորդում՝ հասկանալու Ավետարանի ճշմարիտ շնորհը: «Նարեկը» իսկական գագաթ է, մի բանալի՝ թափանցելու հայերի ամենախիստիմ և ամենաեզակի հոգևորի մեջ:

**ФРАНЦУЗСКОЕ ПРЕДИСЛОВИЕ АННИ И ЖАН-ПЬЕРА МАЭ К
«КНИГЕ СКОРБНЫХ ПЕСНОПЕНИЙ» КАК НОВОЕ СЛОВО В
НАРЕКОЗНАНИИ
Долуханян А. Г.**

В 2012 г. издательство «Наири» выпустило новый французский перевод «Книги скорбных песнопений» Григора Нарекаци, сделанный Анни и Жан-Пьером Маэ, с предисловием и комментариями [2].

Супруги Маэ долгие годы занимались всем творчеством Григора Нарекаци. Заключением их работы по нарекознанию стал изданный в 2002 г. в Париже их пространный труд «Григор Нарекаци и его «Книга скорбных песнопений», который в 2004 г. был переведен на армянский язык [8].

Предисловие заканчивается метким заключением, согласно которому Григор Нарекаци был уверен, что после него его книга будет на

устах до Страшного Суда у бесчисленного множества людей, молящихся Богу от его имени. Что же касается его соотечественников, то его обет полностью услышан. Армяне не стали его критиками, но имеют через него связь, рекомендующую разумность и ясновидение; он духовный учитель, укрепляющий армян и ведущий их к пониманию истинной милости Евангелия. «Нарек» является истинной вершиной, ключом для проникновения в самую интимную и самую исключительную духовность армян.

Ключевые слова: Григор Нарекаци, «Книга скорбных песнопений», Анни и Жан-Пьер Маэ, предисловие, вневременной, Библия, Евангелие, Христос, грех, суд.

THE FRENCH FOREWORD BY ANNIE AND JEAN-PIERRE MAHÉ TO THE BOOK OF LAMENTATION, AS A NEW WORD IN NAREKIAN STUDIES Dolukhanyan A. G.

In 2012, the Nairi publishing house released a new French translation of Grigor Narekatsi's Book of Lamentation, made by Annie and Jean-Pierre Mahé, with a foreword and commentaries [2].

The spouses Mahé were engaged in studies of all the literary legacy of Grigor Narekatsi for many years. The conclusion of their work was the extended study Grigor Narekatsi and his Book of Lamentation published in 2002 in Paris, which was translated into Armenian in 2004 [8].

The preface ends with a well-defined conclusion, according to which Grigor Narekatsi was sure that after him his book would be heard until the Last Judgement from the lips of countless people praying to God in his name. As for his compatriots, his vow is fully heard.

The Armenians did not become his critics, but they have a connection through him, recommending rationality and clairvoyance; he is a spiritual teacher who strengthens Armenians and leads them to understand the true mercy of the Gospel. The Book of Lamentation is a true peak, the key to penetrate the most intimate and most exclusive spirituality of Armenians.

Keywords: Grigor Narekatsi, the Book of Lamentation, Annie and Jean-Pierre Mahé, foreword, timeless, Bible, Gospel, Christ, sin, judgement.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գրիգոր Նարեկացի Մատենան ողբերգութեան, Աշխատասիրությամբ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի: Երևան: Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն: 1985: 1123 էջ:
2. Grégoire de Narek Matean oʻbergut'ean. Le livre de Lamentation. Introduction, traduction et notes par Annie et Jean-Pierre Mahé. Erevan. "Naïri". 2012. 532 p.
3. Գրիգոր Նարեկացի Մատենագիտութիւն: Աշխատասիրությամբ Աստղիկ Ղափլանյանի: Երևան, «Տիգրան Մեծ» հրատարակչություն: 1915: 624 էջ:
4. Դուլուխանյան Ա. Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ: Երևան: ԵՊՀ հրատարակչություն: 2008: 261 էջ:
5. Թամրազյան Հ. Սուրբ Գրիգոր Նարեկացու կյանքը: Երևան: «Նաիրի» հրատարակչություն: 2005: 114 էջ:
6. Թամրազյան Հ. Գրիգոր Նարեկացին և Նարեկյան դպրոցը: Գիրք Ա: Երևան: «Նաիրի» հրատարակչություն: 2013: 331 էջ:
7. Խաչատրյան Պ. Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը: Ս. Էջմիածին: 1996: 395 էջ:
8. Մահե Աննի և Ժան-Պիեռ: Գրիգոր Նարեկացին և իր «Մատենան ողբերգութեան» երկը: Երևան: «Նաիրի»: 2004: 324 էջ:
9. Mahé Annie et Jean-Pierre L'Arménie à l'épreuve des siècles. Paris: Gallimard. 2005. 160p.
10. Ս. Գրիգոր Նարեկացի Մատենան ողբերգութեան (Նարեկ): Երևան: Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն: 2016: 613 էջ:
11. Մատենագիրք Հայոց: հ. ԺԲ: Ժ դար: Գրիգոր Նարեկացի: Երևան: «Նաիրի» հրատարակչություն: 2011: 1120 էջ:
12. Մաշտոցի անվան Մատենադարան: Ձեռագիր № 7703: 106 ա-109բ:

Տեղեկություններ հեղինակի մասին

Դոլուխյան Ա. Գ. – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Հայկական պետական մանկավարժական համալսարան
Էլ. փոստ՝ aelita.dolukhanyan@gmail.com

Տրվել է խմբագրություն 02.10.2019